Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Յ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԻՆԹՂԹԱԿԻՑԸ, ՆՐԱ ԴԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ՀԵՐԼ. Ա. Ս. 1929 թ.

355.233.23

Ցե. ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԻՆԹՂԹԱԿԻՑԸ, ՆՐԱ ԴԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

A 3798

ՀԱՅԿ. ՀՐԱՋ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺ. ԽՄԲ.-ՀՐԱՏ. ՄԱՍ

ԵԵՐԵՎԱՆ 1929 թ.

Е. Саркисян. —Военкор, его роль и задачи

ՀԱՅԳՈՒԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ

Գրառեպգ.խվար 2085 բ. Պատվեր 3227
Տիրաժ 1500.

ՁԻՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ընկ. Բուբնովի ճառից)

Բանթղթակիցները,—այդ խորհրդային բանվորա-գյուղացիական հասարակայնության մի հզոր ուժն է, և Կարմիր բանակն անմաս չէ այդ ուժից։ Մենք,—Կարմիր բանակս,—ներկայացված ենք բանդյուղթղթակիցների բանակում 40 հազարանոց բազմամարդ ջոկատով։

...Այսոր բանդյուղթղթակից է, իսկ վաղը նա դառնում է զինթղթակից։ Այսոր նա զինթղթակից է, իսկ հեռանալով Կարմիր բանակի շարքերից և մտնելով բանվորական կամ գյուղացիական ընտանիքի մեջ, նա հաճախ դառնում է բանդյուղթղթակից։ Զինթղթակիցների 40 հազարանոց ջոկատն որդանապես կապված է բանդյուղթղթակցական շարժման հետ, վորովհետև մենք բանակում հենց ձեր, բանդյուղթղթակիցներիդ միջավայրից ենք վերցնում զինթղթակիցներին, իսկ դուք լրացնում եք բանդյուղթղթակիցների շարքերը այն յերիտասարդության միջից, վորը մենք ամեն տարի ներգրավում ենք Կարմիր բանակի շարքերը։ Դուք վերցնում եք Կարմիր բանակի շարքերից, վորպես յերիտասարդության լավ դպրոցից, բանակային դպրոցն անցած թղթակիցներից։

Ցեթե դուք գործարաններում, գյուղում կամ քաղաքում, բանակից դուրս, կատարում եք և

պետք է աշխատանք կատարեք բանակի համար, ապա բանակ գալով ու նրա շարքերը մտնելով, այնտեղ զինթղթակից դառնալով, դուք շարունակում եք ձեր աշխատանքը՝ մեր բանվորա-գյուղացիական պետության մեջ ռազմական գործի ամրացման վերաբերյալ...

Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի զինթղթակիցն աշխատում է մի փոքր այլ պարագայում, քան թե՝ բանթղթակիցը գործարանում կամ գյուղթղթակիցը գյուղում: Բանակը յուրահատուկ կազմակերպություն է: Բանակը խաղաղ ժամանակ պատրաստվում է պատերազմի համար: Բանակը ռազմական կազմակերպություն է, վոր կոչված է պատերազմի համար: Բանակը մի կազմակերպություն է, վորը կենտրոնացված է բարձր չափով, կարգապահ է, աշխատում է տվյալ հրամանի խստիվ կատարման հիման վրա: Ցեվ այդ պատճառով էլ յեթե դուք, դիցուք, գործարանում կամ գյուղում ձեր մերկացուցիչ գրչով մի վորևե սխալ գործեք, այդ սխալը յեթե այստեղ, դիցուք, չափազանցված է, յեթե մերկացնողն աչքաթող է արել պարագան, յեթե այստեղ նա, ինչպես ասում են, փոքր ինչ զոռ է տվել իր գրչին, առանձնապես մեծ վնաս չի հասցնի. այդ վնասը յեթե լինի յել, կշտկվի շատ ավելի արագ, քան թե յեթե նման սխալներ դուրս թռչեն զինթղթակցի գրչի տակից:

Մենք, ընկերներ, բանակը կառուցում ենք, վորպես կենտրոնացված կազմակերպություն, ուստի և բանակում մենք պետք է առանձնապես զգուշ լինենք, հատուկ խնամքով վերաբերվենք դեպի պետերի կազմի հեղինակությունը, դեպի

հրամատարի հեղինակությունը։ Կարմիր բանակն ու ամբողջ յերկիրը պետք է ձգտեն վորպեսզի կարմիր բանակի շարքերում ունենան մեր խնկական կարմիր հրամատարը։ Ցեվ մենք հասանք այդ բանին։ Մենք ձգտում ենք, վորպեսզի կարմիր հրամատարն արժանի լինի կարմիր բանակին, ուստի և մենք շատ թանգ ենք գնահատում կարմիր բանակի շարքերում հրամատարի հեղինակությունը։ Զինթղթակիցը, վորը մերկացումներ և անում, զինթղթակիցը, վորը մատնանշում է կարմիր բանակի շարքերում յեղած թերությունների մասին, պետք է միշտ մտահոգվի, վոր իր մերկացումը չդցի կարմիր բանակում բանվորա-գյուղացիական հրամատարի հեղինակությունը։ Ցեսս ձեզ ասացի, վոր բանգյուղթղթակցի սխալները,—իսկ այդ սխալներն, իհարկե, անխուսափելի յեն,—յեթե նրանք քաղաքացիական պարագայում վնաս են հասցնում, այդ վնասը շատ սվելի արագ է վերացվում, քան յեթե նման սխալի հետ մենք գործ ենք ունենում կարմիր բանակում։

Կարմիր բանակը կենտրոնացված կազմակերպություն է, ուստի և մենք շատ մեծ ուշադրություն ենք դուցց տալիս զինթղթակցային աշխատանքի ծավալման, պատի թերթերի ցանցի ծավալման նկատմամբ։ Մենք թերթ ենք հաստատում միայն այնտեղ, վորտեղ կա ամուր կուսակցական կազմակերպություն, մենք թերթերի խմբագրների նկատմամբ գործադրում ենք նշանակման սիստեմ և այլն, վորը միանգամայն համապատասխանում է բանակային ռազմական կազմակերպության վարման ու բնույթին։ Ցեսս ձեզ այդ մասին ասացի նրա համար, վորպեսզի դուք մի ավելորդ ոնդամ

Եվ մտածեք այդ հարցի մասին, վորպեսզի դուք մի անգամ ևս հասկանաք, վոր գինեթղթակիցների աշխատանքը կարմիր բանակում պահանջում է մեծ զգոնություն, մեծ զգուշություն, մինչև անգամ կարելի է ասել, մեծ խորաթափանցություն, քան թե բանգյուղթղթակցի աշխատանքը գործարանում կամ գյուղում։

ՋԻՆԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

ՋԻՆԹՂԹԱԿՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զինթղթակցի խնդիրներից հիմնականն է՝ աջակցել բանակի մարտունակության ամրացմանը: Զինթղթակիցը կազմակերպում է Կարմիր բանակային հասարակական կարծիք՝ բանակի մարտական, քաղաքական պատրաստության հրատապ հարցերի շուրջը, ոգնելով ամբողջ հրամքաղկազմին՝ դաստիարակելու մարտիկ-քաղաքացի, ԲԿ Կարմիր բանակի համարձակ, ձեռներեց, կարգապահ մարտիկ:

Զինթղթակցային շարժման ուժը նրա մեջ է, վոր նա իսոր արմատներ է դցել կարմիր բանակայիններին հոդու մեջ և հանդիսանում է մի խոշոր ծակ մարտական կորովի ամրացման գործում:

ՋԻՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Զինթղթակցի ուժը նրանումն է, վոր նա կարողանում է գործնապես աջակցել զորամասի մարտական կորովի ամրացմանը, մարտիկ-քաղաքացու դաստիարակությանը: Այս ամենը կարելի յե իրագործել այն պայմանով, յերբ զինթղթակիցը լուրջ է վերաբերվում դեպի իր գործը:

Զինթղթակիցը պետք է ունենա նախաձեռնություն, հնարագիտություն ցույց տալու հրամ-

ություն, փաստերն ըմբռնելու, փաստերին ճիշտ արձագանգելու, գլխավոր խնդիրը գտնելու և այդ խնդրի վրա կարմիր բանակային մասսայի ուշադրությունը կենտրոնացնելու կարողություն: Դեպքերին ու փաստերին ճիշտ գնահատական տալու, մասսաներին առաջ տանելու և պոչից քարշ չգալու հմտություն. պարագային արագ հարմարվելու և բազմազան պայմաններում աշխատելու կարողություն:

Իսկ ինչպես պետք է զինթղթակիցը կատարի իր աշխատանքը. զինթղթակիցը պետք է գործով ցուցահանի նախաձեռնություն, ըմբռնի փաստերը, գտնի գլխավոր խնդիրը, ճիշտ գնահատի քաղաքական անցքերը, քարշ չգա պոչից, հարմարվի պարագային:

ԶԻՆԹՂԹԱԿՑԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Է

Վոչ վոք կարմիր բանակայինին ստիպելով զինթղթակցային կազմակերպության մեջ չի քաշում: Վոչ վոք չի պարտավորեցնում կարմիր բանակայինին գրել թերթում:

Կարմիր բանակայինն ինքնուրույն, կամավոր կերպով հարում է զինթղթակցային կազմակերպությանը, յեթե նա ցանկություն ունի մասնակցելու զինթղթակցային աշխատանքին, սովորելու և փորձ ձեռք բերելու այդ գործում: Կարմիր բանակայինն առանց ձևականությունների զինթղթակիցների շարքերն է անցնում, և ցանկացած բոպեին նա կարող է թողնել զինթղթակցային կազմակերպությունը:

Զինթղթակիցները համախմբվում են իրենց

վաչտային թերթի շուրջը, այստեղ նրանք աշխատանքի փորձ են ձեռք բերում:

ԻՆՉՊԵՍ ԶԻՆԹՂԹԱԿԻՑ ԴԱՌՆԱԼ

Յուրաքանչյուր վոք, ով շարունակ գրում և թերթում, կամ այնտեղ զետեղելու համար նկարներ և տալիս, համարվում է զինթղթակից: Զինթղթակից կարող է լինել և կարմիր բանակային և հրամատարը: Զինթղթակից դառնալու համար հարկավոր է վարժվել թերթում գրել:

Ինչպե՞ս այդ անել:

Շատ ընկերներ ասում են, վոր իրենք ուրախությամբ զինթղթակից կդառնային, բայց չգիտեն, թե ինչի մասին և ինչպես պետք է գրել: Այդ սկսնակ զինթղթակիցների ամենատարածված հարցն է: Ինչպե՞ս վարժվել գրել թերթի համար:

Ամենից առաջ հարկավոր է ընտրել նյութը: Նյութեր մեր կյանքում վորքան ուզես կա: Որինակ՝ մենք այսոր գնացել եյինք անհատական վարժության—ահա քեզ նյութ: Կամ այսոր ուսումնասիրում եյինք ներքին կանոնագիրքը- -ահա յերկրորդ նյութ. ուսումնասիրում եյինք հրացանը—յերրորդ նյութ. կամ զբաղվեցինք փորձնական հրաձգությամբ—չորրորդ նյութ: Դիցուք, վերցրել ենք անհատական վարժության նյութը: Ինչպե՞ս նկարագրել այն: Պետք է նկարագրել այնպես, ինչպես անցել է վարժությունը, ինչ ես նկատել ինքդ. լավ եր անցնում արդյոք պարապմունքը, ինչպես եյին պարապում կարմիր բանակայինները, ինչ ստացան նրանք այդ պարապմունքից, ինչպիսի թերություններ կամ լավ կողմեր ուներ պարապմունքը: Յեթե այդ ամենը կարողա-

ցավ զինթղթակիցը տալ, ապա թղթակցությունը հետաքրքիր կլինի և ոգուտ կբերի։

Շատ մեծ նշանակություն ունի, վոր զինթղթակիցը նկարագրի հատկապես մի՛ նյութ. թե չէ հաճախ պատահում է, վոր սկսնակ ընկերը մի և նույն թղթակցության մեջ ուզում է ընդգրկել կարմիր բանակային ուսուցման բոլոր տեսակները։ Ավելի լավ է յուրաքանչյուր նյութ լուսաբանվի առանձին-առանձին։

Ընկերներից շատերն իրենց թղթակցություններում շատ քիչ փաստեր են բերում։ Այդ վատ է։ Յուրաքանչյուր զինթղթակից պարտավոր է իր ամեն մի միտքը հաստատի փաստերով, այլապես թղթակցությունը համոզիչ չի լինի։ Զինթղթակիցը պետք է հիշի, վոր վորքան շատ փաստեր բերի, այնքան հետաքրքիր կլինի թղթակցությունը։ Զարմանալի ոգտակար է, վոր սկսնակ թղթակիցը խորհուրդներ և ոգնություն խնդրի հին զինթղթակցից, կամ վաշտային թերթի խմբագրից կամ խմբակոլի անդամից։ Այդ շատ կոդնի նրան «վոտքի կանգնելու»։ Ցերիտասարդ զինթղթակցին մեծ ոգնություն ցույց կտան նաև վաշտում զինթղթակիցների հետ տարվող պարապմունքները։

ՆՈՐԵԿ ԶԻՆԹՂԹԱԿԻՑՆ ՈՒ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԹԵՐԹԸ

Սկզբնական շրջանում նորեկ զինթղթակիցը, մանավանդ նախկին բանդյուղթղթակիցը, բավական ջանք պետք է գործ դնի, վորպեսզի տարբերի զինթղթակցային աշխատանքների առանձնահատկությունները բանակում, վորպեսզի վարժվի հետագա աշխատանքների համար։ Սկզբնական շըր-

չանում նա կարիք կունենա ավելի ընկերների ուղնության։

Նա իրեն համար ուղնողներ կգտնի հին զինթղթակիցների մեջ։ Նա կկարողանա ցուցումներ ու խորհուրդներ հարցնել զինթղթակցային կազմակերպչից, բջիջի քարտուղարից ու քաղաքական։ Նա պետք է շարունակ կարդա գրքեր ու ամսագրեր բանդյուղթղթակցային և զինթղթակցային շարժման վերաբերյալ։

Նորեկ զինթղթակիցներն առաջին ժամանակներում վախենում են գրել դիվիզիական թերթին, բավականանում են միայն վաշտային թերթերով և լավագույն դեպքում՝ գնդային թերթով։ Այդ միանգամայն սխալ է և անտեղի վախ է։ Ցուրաքանչյուր զինթղթակից պետք է իր զինթղթակցային աշխատանքների առաջին իսկ քայլերից կապվի դիվիզիական կարմիր բանակային մամուլի հետ։

ԶԻՆԹՂԹԱԿԻՑՆ ՈՒ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնաքննադատությունը կամպանիա չէ, որն անց են կացնում որոշ ժամանակաշրջանում։ Ինքնաքննադատությունը մեր աշխատանքի մեթոդն է, որին մենք պետք է կարողանանք տիրել։ Ինքնաքննադատությունը մեր թերթերում պետք է ընթանա ձգձգումների, բյուրոկրատիզմի, թափթփվածության, տնտեսական թերությունների և կուսլուսաշխատանքներում նկատվող կազմակերպչական դեմ մղած պայքարի գծով։

Ինքնաքննադատությունը պետք է կոչ անի ամբողջ կարմիր բանակային մասսային ակտիվ

մանակցելու զորամասի շինարարության, նրա ամբողջ կյանքին։ Նա պետք է առաջ քաշի յուր մնացողներին, ամբողջ վաշտը դարձնի ակտիվ օրգանիզմ, որը ամբողջ յուրանդն ուղղում է զորամասի ամրացման գործին։ Ավելի շատ լուրջ, մեծ, ամբողջ մասսան հետաքրքրող հարցեր. ավելի քիչ վախ այդ հարցերի հանդեպ։

Զինթղթակիցը պետք է գրի այն ամեն վատ մասին, ինչ նա տեսնում է կամ իմանում է. այն բոլոր թերությունների մասին, որ խանգարում են մեր աշխատանքին, քանի որ այդ թերությունների հայտաբերումն ու վերացումը նույնպես ծառայում է զորամասի հետագա զարգացմանը։ Ինքնաքննադատության կրակը պետք է ուղղած լինի բանակային մասսայի մեջ յեղած թերությունների ու բացասական յերևույթների դեմ։

ԳՐԵԼ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Չկա զորամասի շինարարության մի բնագավառ, որին չկարողանա դիպչել զինթղթակիցը, որի մասին նա չկարողանա գրել թերթին։ Հարկավոր է միայն յուրաքանչյուր թղթակցություն, անկախ նրանից, թե ինչ նյութ է շոշափում, գրել այնպես, որ նրա արդյունքը ծառայի հոգուս կարմիր բանակի։

Կարող է արդյոք զինթղթակիցը գրել հրամանատարի սխալ գործողությունների կամ վատ որարքների մասին։ Իհարկե, կարող է։ Դեռ ավելին, նա պետք է գրի այդ մասին։ Բայց ամեն անդամ, յուրաքանչյուր առանձին դեպքում զինթղթակիցը պետք է վորոշի, թե նյութը դեռևս

հետևանքով ոգու ուն ավելի շատ կլինի, թե վնասը՝ հրամատարի հեղինակությունը գցելու պատճառով։

Վո՞ր նյութին ամենից՝ շուտ պետք է արձագանգի գինթղթակիցը։ Նյութերը շատ շատ են։ Այդ նյութերից ներկայումս ամենահրատապն է կուլտուրան մեր կենցաղում, կռիվը հարբեցողության դեմ, մանր գողության դեմ, անդրադարձության վերացումը մեր շարքերում, լավագույն զորանոցի մրցակցությունը, պայքարը կուլտուրական սովորքների համար, աշխատանքներում յերևացող կաղյոնշչինայի դեմ, զանազան կամպանիաներին պատրաստվելը։

Քիչ նյութեր չեն տալիս մեզ ստորաբաժանումների շարային կյանքը—ուսուցման առաջին քայլերը, պահակային ծառայության ուսումնասիրությունն ու կատարումը, կարգապահության գործնության հարցերը։

Կարմիր բանակայիններին փոխհարաբերությունների հարցերն իրար միջև և թե հրամատարների հետ նույնպես չպետք է աչքաթող արվեն գինթղթակցի կողմից։

ԻՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ՆՅՈՒԹԸ ՆԱԽՔԱՆ ՆՐԱ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Հարկավոր է ամենից առաջ մտածել, թե արդյոք գինթղթակիցը բավականաչափ ովյալներ ունի՞ ընտրած նյութը լուսաբանելու համար։ Լավ, մոտիկից ծանոթանալով նյութին կերևա, վոր այս կամ այն կողմը դեռ պարզ չէ գինթղթակցի համար։ Մի բան դեռ պակասում է։ Այդ հայտարերելով գինթղթակիցը պետք է մտածի,

թե ինչ տվյալներ, վորտեղից և ումից կարող և ստանալ հարցը լիովին պարզելու համար։

Վերցնենք, որինակ, այսպիսի մի դեպք. գինթղթակիցը հայտարերել և հասարակական կազմակերպության վատ աշխատելու փաստը և կամենում և պարզել դրա պատճառները։ Նա անխուսափելիորեն կգա այն յեզրակացության, վոր կա՛մ ղեկավարությունն է վատ, կա՛մ բավականությունն է անբավարար, կա՛մ չեն կարողանում դրավել մարտիկներին։

Այդ հանգամանքը պարզելու համար գինթղթակիցը պետք է դրուցի քաղաքի, բջջի քարտուղարի հետ, իմանա կարմիր բանակայինների կարծիքը, պարզի նրանցից, թե հատկապես ինչ և անբավարար, ինչ կուզեին նրանք։ Պետք է դրուցի կուսակցականների, կոմյերիտականների, հրամատարների հետ—և ահա այդ բոլորի ամփոփումները կտա պատկերի լիակատար լուսաբանումը։

Բայց արդյո՞ք այդպե՞ս են վարվում շատ-նակ մեր բոլոր ընկերները։ Վո՛չ. յերբեմն տրվում և միանգամայն չստուգված նյութ։ Լսել և գինթղթակիցը մի վորևե մեկից մի կողմնակի լուր, մանավանդ կենցաղի բնագավառից, և այդ արդեն միանգամայն բավական և համարում թղթակցություն գրելու համար։ Հետո, չնորհիվ նրա այդ ոնվությունության, մի ամբողջ դրագրություն և ստեղծվում։

Զավալանց տարածված և նաև մեկն ու մեկին թերթում «կոթելու» ձգտումը. աշխատում են փորփրել մի վորևե պատահական փաստ ու իսկույն «Կարմիր Զինվոր»-ին ուղարկել։ Բայց յերբ նր-

ման թղթակցությունը խմբագրությունը զբաղ-մաս և ուղարկում տեղնուտեղը միջոցներ ձեռք առնելու համար, դինթղթակիցն աղմուկ է բարձ-րացնում։

— Ինչպե՞ս, չապաղրել այդպիսի հրաշալի նյութը, այդ նշանակում է, վոր խմբագրությունը կուլմնապահություն է անում, ոքողում է թերու-թյունները...

Իհարկե, նման դեպքերում ընկերները մոռա-նում են, վոր թղթակցության թերթում գեսեղելը միակ և այն էլ ամեն անգամ ամենահաստատուն միջոցը չէ թերությունը վերացնելու համար։

Հանձնարարվում է յուրաքանչյուր դինթղթ-թակցին, նախքան այս կամ այն նյութի մասին գրելը կազմել փոքրիկ պլան, թե ինչ մոմենտներ պետք է լուսաբանի, վորտեղ և ինչ տվյալներ պետք է հավաքի, ում հետ պետք է խոսակցի, ինչ պետք է ստուգի, ինչ փաստեր պետք է ձեռք բերի, ինչպիսի փաստերով պետք է ապացուցի տրվ-յալ յերևույթը։

Իր առաջ ունենալով այդպիսի պլան, դին-թղթակիցն ավելի քիչ սխալներ կանի։ Նա ավելի հիշտ կլուսաբանի, ավելի կոնկրետ փաստեր կբերի, ավելի գործնական յեզրակացություններ և առաջարկներ կանի։

Իրականությունը հարկավոր է տալ այնպես, ինչպես նա կա, առանց «ծաղկեցնելու», առանց քո-դարկելու թե՛ լավը, թե՛ վատը, թե՛ նվաճումնե-րը և թե՛ թերությունները։

Միայն այս պայմանով դինթղթակիցը կտա մարտիկների տրամադրությունների իսկական հիշտ պատկերը, նրանց վերաբերմունքը դեպի

ծառայությունը և այդպիսով իսկ կողնի ռազմաքաղաքական ուսուցման ճիշտ կազմակերպությանը։

ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱՆՎԵՐՋ ԸՆԴՀԱՆՐԱՑՆԵԼ

Մեր մի շարք պատի թերթերը տառապում են մի մեծ թերությամբ. նրանց մեջ բացակայում է կարմիր բանակային ուսուցման պարզ արտահայտած դեմքը։ Զետեղվում են շատ նյութեր, վոր կրում են ընդհանուր բնույթ։ Որինակ՝ չի մատնանշվում, թե ինչ վիճակում է գտնվում ուսուցման տվյալ աստիճանում հրաձգային գործի ուսումնասիրությունը, նրա յուրացումը կարմիր բանակայինների կողմից, ներքին ծառայության, կայազորային, կարգապահական կանոնադրքերի ուսումնասիրությունը, մարտիկի ֆիզիկական դաստիարակության դրությունը, անհատ-մարտիկի ուսուցումը, ինչ հաջողություններ ու թերություններ կան քաղպարապմունքներում, կարմիր բանակայինների վերաբերմունքը դեպի այդ պարապմունքները; լենանկյան առանձին խմբակների, հասարակական կազմակերպությունների աշխատանքները և այլն և այլն։ Մեծ մասամբ բոլոր ռազմական առարկաները վերցվում են միատեղ և նրանց մասին կազմում են մի ընդհանուր ամփոփիչ թղթակցություն։ Իհարկե, հնարավոր չի լինում թերթի միջոցով գաղափար կազմել ուսուցման վորևե բաժնի մասին, վորի հետևանքով կորչում է թե թերթի և թե ամբողջ զինթղթակցային աշխատանքի արժեքը։

Անհրաժեշտ է սովորեցնել զինթղթակիցներին, վորպեսզի նրանք յուրաքանչյուր առան-

ձին–առանձին առարկա մշակեն առանձին թըղթակցությամբ, վորպեսզի նրանք մի քանի նյութ չխառնեն իրար և «չիլափլավ» սարքեն:

Ամբիոնն էլ նախքան թերթի լույս ընծայումը պետք է ունենա վորոշ պլան: Այդ պլանը պետք է ընդգրկի ըստ հնարավորին աշխատանքի բոլոր ճյուղերը: Այդ պլանով էլ հենց պետք է կառուցել թերթը, ձգտելով բաղմակողմանիորեն լուսաբանել կարմիր բանակայինների ուսուցումը: Առանց վորոշակի, պարզ նպատակադրման, առանց ուսուցման առանձին առարկաները բաղմակողմանիորեն լուսաբանելու, թերթը չի արդարացնի իր կոչումը:

ԱՎԵԼԻ ՄՈՏ ԿՑԱՆՔԻՆ

Առանց լայն ծավալված մասսայական աշխատանքի, զինթղթակիցները իրենց խնդիրները կկատարեն միայն կիսով չափ: Պետք է կարդի բերել պատի թերթերի ընթերցումը՝ անմիջապես նրանից հետո, յերբ թերթը լույս է տեսնում: Դրա հետ միասին պետք է համապատասխան բացատրություններ տալ շոշափած հարցերին:

Զինթղթակիցները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն նաև հարց ու պատասխանի տետրի ու լենինարհուրդների որագրերի վրա. Կարմիր բանակայիններին հետաքրքրող հարցերը պետք է լուսաբանվեն պատի թերթերում: Ամբան չրջանում պետք է ձգտել, վորպեսզի կարմիր բանակայինների պահանջների ու հարցումների բավարարումն ընթանա վոչ միայն հրամատարության գծով, այլև մեր մամուլի, զինթղթակիցների միջոցով:

ՀՍՍՌ ԳԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Ձմրան չրջանի կենտրոնական հարցերից մեկն է պատրաստությունը պատերազմի ժամանակվա աշխատանքներին։ Այդ պատրաստության ձևերը բազմատեսակ են։ Ցերբ մենք ձմրան ընթացքում լույս ենք ընծայում փոքրիկ, մարտական, ճկուն շարաթաթերթ, յերբ մենք վարժվում ենք արագ արձագանգել բոլոր հարցերին, դրանով իսկ մենք մեր մեջ մշակում ենք արժեքավոր հատկություններ, վոր անհրաժեշտ են մեզ մանյակներում ու պատերազմում։ Անհրաժեշտ է նաև յերթերի ու մանյակների հատուկ ուսումնասիրություն, դինթղթակիցների ռազմական խաղեր ու. տարբերը։

ԶԻՆԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Ցերթ ճամբարային ամբողջ ուսուցումը ըստուգումն է այն ամենի, ինչ անցել են ձմրանը տեսականապես, և ամենից առավել շտիրով մոտենում է մարտական պարագային, այդ դինթղթակցային աշխատանքը նույնպես պետք է սերտորեն կապված լինի ճամբարային ուսուցման հետ։

Գործնական աշխատանքը մարտականին մոտ պարագայի պայմաններում դինթղթակցային աշխատանքի հիմնական խնդիրն է ճամբարում։

Բանդյուղթղթակիցների 4-րդ խորհրդակցությունը հիմնական ցուցումներ տվեց՝ ճամբարում դինթղթակցի կատարած աշխատանքի մասին։ Այդ ցուցումների վրդով պետք է ծավալվի ամբողջ

աշխատանքը։ Ամբարային պայմանները, բնականաբար, վոչ թե կկրճատեն զինթղթակցի զուտ «տեսական» աշխատանքը։ Բայց դրա փոխարեն գործնական աշխատանքը պետք է ավելի ուժեղացվի։ Ռազմական ուսուցում, սպորտ, գյուղի, և մասնավորապես գյուղական պատի թերթերի, ռազմականացման աշխատանք—ահա թե ինչ պետք է լինի զինթղթակիցների ուշադրության կենտրոնում։ Պետք է հատուկ ուշադրություն դարձնել թղթակցությունների վորակի բարձրացման, խմբագրությունների հետ կապի բարելավման վրա։ Ուսուցման և աշխատանքի մյուս ձևերն նույնպես չպետք է աչքաթող անել։ Ինայոզության ու տնտեսության կամպանիաները ճամբարում պետք է շարունակել ավելի յեռանդով, քան յեղել է մինչև այժմ. ճամբարում այդ առթիվ նյութեր բավական շատ կլինեն։

ԱՆՑԵԱԼ ՏԱՐՎԱ ՓՈՐՁԸ

Այդ կարճ կարելի յե բնութագրել հետևյալ ձևով.—1) զինթղթակիցներն անցյալ տարի մեծ մասամբ ճամբար դուրս յելան չպատրաստված. 2) ժամանակին հաշվի չեր առված, թե յերթական–դաշտային կյանքում պահանջվելու յին աշխատանքի հատուկ մեթոդներ. 3) 1904 թվի ծնված կարմիր բանակային–զինթղթակիցները ընկնեցին հեռանալ զինթղթակցային շարժումից։

Այստեղից մենք աղատ կարող ենք յեզրակացնել, վոր մեր զինթղթակիցը տակավին թույլ և հարմարվում աշխատանքի նոր պայմաններին, վոր նոր պարագայում նա չփոթվում է, և այդ

չվոքթությունը, ինչպես ցույց տվեց փորձը, տևվում է 1 ամիս։ Ի՞նչ է դրա պատճառը։ Պատճառն այն է, որ գինթղթակիցը, ճամբար դուրս գալով, դեմ է առնում աշխատանքի մեծ թափին, հարցերի ավելի լայն շրջանի, որ պայմանավորված են յերթական–դաշտային պարագայով։

ՎՈՐՆ Է ԱՅՍ ՏԱՐՎԱ ՃԱՄԲԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարվա ճամբարային ուսուցումը փոքր ինչ տարբերվում է անցյալ տարվանից, և այդ մասին գինթղթակիցը պետք է վաղորոք իմանա։ Այս տարի հատուկ ուշադրություն է դարձվում հետևյալ խնդիրների վրա.

1. Ուշադրության կենտրոնը մանր միավորներից ուղղվում է մեծ միավորների վրա. 2. հատուկ ուշադրություն է նվիրվում ջոկատային ուսուցմանը. 3. դաշտային կարգապահության մշակում. 4. ստուգումն այն բանի, թե ինչպես և հարմարվում յերթական–դաշտային պարագային կուսքաղաքական, արտադպրոցական ու գինթղթակցային աշխատանքը. 5. նշանավոր տեղ է դրավում մարտիկի մարտական հատկությունների մշակումը։

Ինչո՞ւ յե հարկավոր մեզ իմանալ այդ առանձնահատկությունները. վորպեսզի մենք ժամանակին կարողանանք հարմարվել ճամբարային ուսուցման մեծ ու բարդ շղթայում, նրա յուրաքանչյուր աստիճանում կարողանանք դտնել դրախավոր ողակը։

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր խնդիրներից գլխավորը, որը կորոշում է գինթղթակցի ամբողջ աշխատանքի ուղղությունը, աջակցությունն է հրամատարության բանակային մարտական պատրաստության գործում, դաշտային կարգապահության, պատասխանատվության, համարձակության, վճռականության, նախաձեռնության դաստիարակությունն է ու դաժան պայքարն է ընդդեմ թափթփվածության ու ծուլության:

Ինչպե՞ս պետք է գործնապես իրականացնի գինթղթակիցն այդ բոլորը:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր զորամասում հայտաբերել լավագույն կարմիր բանակայիններին: Նրանք պետք է կենտրոն ծառայեն, որոնց շուրջը պետք է ստեղծվի կարմիր բանակային հասարակայնություն: Գինթղթակցի ամբողջ աշխատանքում պետք որքան կարելի են շատ փաստեր և օրինակներ լինեն: Հարկավոր է ագիտացիա մղել և կազմակերպել կարմիր բանակային մասային վառ փաստերով, համոզիչ օրինակներով: Ուսուցման յուրաքանչյուր աստիճանում պետք է դնել առանցքը:

Արդյոք այդ նշանակում է, որ գինթղթակիցը պետք է հենվի մի կետի վրա և մնացածը մոռացության տա. վո՛չ: Կենտրոնացնելով կրակը գլխավոր ողակի դեմ նա իրավունք չունի աչքաթող անել մնացած այն բոլոր ողակները, որոնք կազմում են ճամբարային ուսուցման ամբողջ շղթան:

ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Պատի թերթը ճամբարում պետք է տարբերվի իր հոդվածների կարճառոտությամբ, գործարարությամբ։ Պատի թերթում պետք է զգացվի յուրմեկան դաշտային ուսուցման լարվածությունն ու կարևորությունը։ Թերթը պետք է ունենա մարտական վոճ։ Այնուհետև պետք է գործնականում ստուգել խմբկոլների ու թերթերի հրատարակման կոդմակերպությունը մարտավարական պարապմունքների ու յերթերի պայմաններում։

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր զինթղթակիցը ճամբարում պետք է լինի կարմիր բանակային հասարակայնության կազմակերպիչ մարտական ուսուցման խնդիրների շուրջը։ Նա պետք է լինի հրամատարի, քաղաքխատողի, կարմիր բանակայինի ոգնականը զորամասերի մարտական ու քաղաքական ուսուցման բոլոր տեղամասերում։

ԶԻՆԹՂԹԱԿԻՑԸ ՄԱՆՅՈՎՐԱՆԵՐՈՒՄ

ԽՄԲԿՈԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մանյովրային պարապմունքն պահանջում է վաշտային ու գնդային թերթերի խմբագրություններից ճկունություն և միևնույն ժամանակ աշխատանքի վորոշակիություն։ Անցած մանյովրանները ցույց տվեցին, վոր մարտական պայմաններում խմբկոլների համար աշխատելը դժվար է։ Դժվար է հավաքել նաև զինթղթակցային ժողովներ։ Իսկ թերթ հրատարակել պետք է։ Ապա ինչպես պետք է անել։

Փորձը ցույց տվեց, վոր թերթի հրատարակ-

ման ամբողջ պատասխանատվությունը պետք է դնել խմբագրի վրա, վոր թերթի համար ամբողջովին նա պետք է պատասխանատու լինի, և նա լե մենակ խմբագրում թերթը։ Բայց խմբագրի համար դժվար է մենակ կատարել այդ ամբողջ աշխատանքը։ Այդ պատճառով խմբագրին ոգնելու համար կուսակցամակերպությունները պետք է ջոկեն դասակային լիազորներ՝ կուսակցական կամ կոմսերիտական ակտիվ գինթղթակիցներից։

Դասակային լիազորներն ոգնում են խմբագրին թերթի հրատարակման գործում. նրանք ուղղում են և արտադրում թղթակցությունները, հրահանգում են բոլոր պատեհ դեպքերում դասակի գինթղթակիցներին, նյութեր են հավաքում թերթի համար, տարածում են իրենց թերթը զորամասերում։ Լիազորների միջոցով խմբագիրը կապ է հաստատում գինթղթակիցների հետ։ Բայց սրանց անգամ հնարավոր չի լինում հավաքել դասակային լիազորներին։ Այդ դեպքում խմբագիրը թերթի հրատարակմանն ոգնելու համար ոգտագործում է յեղած գինթղթակիցներից 2–3 հոգու։

Խմբագիրն անձամբ կամ լիազորների միջոցով պետք է մշտական կապ պահի հրամատարության հետ։ Սերտ կապը հրամատարության հետ կոգնի խմբագրին իրազեկ լինել վաշտի մարտական խնդիրներին, ավելի մոտիկից ծանոթանալ այն թերություններին, վոր պետք է հարվածվեն թերթում և այլն։ Հրամատարն ինքն էլ պետք է շարունակ աջակցի թերթին, աշխատակցի նրան և արագ միջոցներ ձեռք առնի կարևոր մերկացնող հոդվածների առթիվ։

Գնդային թերթերի խմբագրերին ոգնելու հա-

մար. ջոկվում են վաշտային լիազորները (վաշտային թերթերի խմբագրերից)։ Նրանց միջոցով գնդային խմբագրի համար ավելի հեշտ կլինի կարգի բերել գեկավարությունը գինթղթակիցների նկատմամբ։

Վաշտային ու գնդային թերթերը լույս ընծայելուց առաջ պետք է գնվեն համապատասխան քաղաքակի կամ կոմիսարի կողմից (կոմիսարի վիճակներն թերթը կարող է գնել կուսբյուրոյի քարտուղարը)։

ԶԻՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Մանյովրաներում զինթղթակիցների կազմակերպությունն, իհարկե, ամբողջովին պահպանում է իր կամավորական բնույթը։ Թղթակցությունները հրամատարության կողմից նախնական գրաքննության չեն յենթարկվում։ Զինթղթակիցները կարող են իրենց թղթակցություններն ուղարկել ցանկացած թերթին և հանձնել անմիջապես զորական կապի միջոցով, կա՛մ դաստակային լիազորների ձեռքով։

Անցած մանյովրաներում մեկանում զինթղթակիցների ժողովները դումարվում էին առանց հրամատարության թույլատվության։ Հանախ պատահում էր, որ հրամատարին անհրաժեշտ էր այս կամ այն կարմիր բանակայինը, իսկ նա այդ միջոցին գտնվում էր ժողովում։ Իսկական պատերազմում նման դեպքեր չպետք է լինեն։ Այդ պատճառով այժմ կանոն է մտցվում, որ զինթղթակիցները մանյովրաներում ժողովները դումարում են միայն հրամատարության թույլտվությամբ։ Այդ ժողովներն անցնում են միայն վաշ-

տային մասշտաբով խմբագրի ղեկավարությամբ ու բջիջի քարտուղարի ներկայությամբ։ Վաշտային թերթերի խմբագրերի ու լիազորների ժողովներն անցնում են գնդի ղինթղթակցային աշխատանքի կազմակերպչի ղեկավարությամբ և կոլեկտիվի բյուրոյի քարտուղարի կամ անդամի ներկայությամբ։

ՌԱԶՄԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Թղթակցությունները պետք է գրել կարճ, թղթի մեկ յերեսի վրա, հասարակ մատիտով, բայց պարզ ընթեռնելի-ձեռագրով։

Մինչև այժմ միայն առանձին ղինթղթակիցներն են նշանակում իրենց թղթակցություններում առաքման ժամանակը։ Մարտական պարագայում այդ կպահանջվի բոլոր ղինթղթակիցներից։ Դիրքերից, յերթից, ոժանդակից ուղարկված թղթակցություններում պետք է անպայման մատնանշված լինի թղթակցությունն ուղարկելու օրը, ժամը, վայրը, զորամասի անունը։

Ղինթղթակիցը լիովին պատասխանատու յե իր հաղորդած փաստի համար։ Այդ պատճառով նա պետք է խնամքով ստուգի այն փաստերը, վորոնց մասին գրում է։ Իսկ խմբագրության պիտության համար նա պետք է հաղորդի, թե այլինչ փաստն ինքն է տեսել, թե այդ մասին նա գրում է ուրիշի խոսքերից։ Գաղտնի բնույթ կրող թղթակցությունները պետք է ուղարկել միայն ծանոթ անձանց ձեռքով և ծրարի վրա մակագրել՝ «անձամբ խմբագրին»։ Ղինթղթակիցներին հանձնարարվում է ոգտվել կեղծանունով, բայց խմբա-

գրության տեղեկության համար անպայման պետք է հաղորդել իր իսկական անունը, ազգանունը:

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ՃԵՎ ՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼ ՆՅՈՒԹԸ

Մանյովրաներում առանձնապես կարևոր է նյութի և ապա այն թերթի ընտրությունը, վորին ուղարկելու է իր գրածը:

Զինթղթակիցը պետք է մտածի իր նյութի մասին և նայած իր թղթակցության ուղարկի այն կա՛մ վաշտային Ինչիչևկային, կա՛մ գնդային, կա՛մ դիվիզիական և կա՛մ բանակային թերթին: Ցեթե թղթակցությունը կարող է շարժել միայն վաշտի ընթերցողների հետաքրքրությունը, նա պետք է ուղարկվի վաշտային թերթին, յեթե թղթակցությունը հետաքրքրություն է ներկայացնում ամբողջ գնդի կամ ամբողջ դիվիզիայի համար, նա պետք է ուղարկվի գնդի կամ դիվիզիայի թերթին: Վատ բան չի լինի, իհարկե, յեթե զինթղթակիցը միևնույն կարևոր դեպքի կամ փաստի մասին միաժամանակ գրի և՛ գնդի և՛ դիվիզիական թերթին:

ԶԻՆԹՂԹԱԿԻՑՆ ՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Մարտիկները միայն ռազմական գիտելիքները չեն, վոր յուրացնում են. բանակը նրանց պետք է նաև կարգապահ դարձնի: Կարգապահությունն անհրաժեշտ է ամենուրեք, բայց նա առանձնապես կարևոր է բանակում: Առանց կարգապահության չկա բանակ, և կարգապահության հարցն առաջնակարգ տեղերից մեկը պետք է բռնի բանակում:

Ինչպիսի դիրք պետք է բռնի այդ հարցում զինթղթակիցը։ Իհարկե, նա պետք է խիստ կարգապահության կողմնակիցը լինի։ Իհարկե, նա պետք է հրամատարի ողնականը լինի կարգապահության ամրացման գործում։

Ինչ ձևով զինթղթակիցը պետք է պայքարի կարգապահության ամրացման համար։ Անկարգապահության դեպքեր մեզանում շատ են լինում։ Հրամատարն անկարգապահ մարտիկին տույժեր է տալիս, յերբեմն էլ ուղարկում է պահանոց։ Բացի դրանից, նա բացատրում է մարտիկին նրա զանցանքը։ Բայց զինթղթակիցը պետք է իր թղթակցություններով և անձնական ազդեցությամբ հասարակական այնպիսի տրամադրություն ստեղծի, վոր անկարգապահ մարտիկի զանցանքը վճռական դատապարտություն դտնի վոչ միայն հրամատարության, այլև բոլոր մարտիկների կողմից, վոր անկարգապահ մարտիկը դրա ազդեցությամբ զգա իր վարմունքի վատությունը։ Յուրաքանչյուր բացասական վարմունք՝ հրամանի չկատարում կամ նրա անփույթ կատարումը, անտարբեր վերաբերմունքը դեպի ռազմական ծառայությունը, կանոնադրքերի զանցառումը,—այս բոլորը զինթղթակիցը պետք է հարվածի իր թղթակցություններում, յուրաքանչյուր առանձին դեպքերում ապացուցելով փաստերով և որինակներով անկարգապահության վնասակարությունը։

Մյուս կողմից զինթղթակիցը պետք է առաջ քաշի, խրախուսի իր թղթակցություններով կարգապահ, որինակելի մարտիկներին։

Այդ այնքան էլ հեշտ խնդիր չէ։ Թղթակցու-

թյունից հարված ստացած մարտիկներն տուանձին համակրանք չեն տածելու դեպի իրենց հարվածող զինթղթակիցը։ Բայց դրանից վախենալ պետք չե։ Բոլոր զիտակից մարտիկները համաձայն կլինեն զինթղթակցի հետ։ Զինթղթակիցը պետք և հաշվի առնի, վոր իր թղթակցության նպատակը վոչ թե անկարգապահին «ցեխելն» այլ նրա ոխերները չեշտելը, ուղղվելու ճանապարհ ցույց տալը։ Թղթակցության մեջ չպետք և հալածանքի տարրեր լինեն։ Մենք չենք ծածկում, վոր զինթղթակիցը յերբեմն պայքարելով հանուն կարգապահության, կարող և դժվարին դրության մեջ ընկնել։ Հնարավոր և, վոր զինթղթակիցը, պաշտպանելով կարգապահությունն իր դեմ գրգռի շատերին։ Բայց ինչ ել վոր լինի, ինչպիսի դրության մեջ ել նա ընկնի, զինթղթակիցը պետք և պաշտպան-կանգնի հեղափոխական կարգապահության և թերթի միջոցով փաստերով, արինակներով ապացուցի կարգապահության անհրաժեշտությունը, պայքարելով միշտ անկարգապահության դեմ։

ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ՎԱՇՏԵՐՈՒՄ

Ի՞նչ և պահանջվում պատի թերթից։

Նա ամենից առաջ պետք և լինի կարմիր բանակային մասսայի ձայնը։ Հենց այդ պատճառով առաջին պահանջը, վոր արվում և յուրաքանչյուր թերթին այն և, վոր նրան թղթակցեն վորքան կարելի յե շատ մարտիկներ։ Վաշտային թերթը միշտ ել պետք և իրեն խնդիր առաջադրի՝ բարձրացնել զորամասի մարտունակությունը, ամրացնել կար-

դասակարգությունը, հետևել զորամասում առորյա աշխատանքի ճիշտ դրմանը, լուսաբանել կարմիր բանակայինների կյանքը, անմիջապես արձագանգել նրանց հուզող հարցերին:

Պատի թերթը լույս է տեսնում վորոշ ժամանակամիջոցներում. այդ ժամանակամիջոցներում առաջադրվում են մի շարք լուրջ խնդիրներ, վոր հուզում են բանակայիններին և կարոտ են բացատրության: Կուսակցությունն առաջադրում է մի շարք նոր լոզունգներ, վոր անց են կացվում վաշտային բջիջի կողմից: Ցեվ ահա թերթի յուրաքանչյուր համար պետք է ունենա իր հենակետը: Պատի թերթը հանդիսանում է վաշտի կուսբջիջի որգանը: Նրա խնդիրն է անցկացնել կուսակցական ազդեցությունը: Այդ պատճառով ամբողջ թերթը պետք է համակված լինի կուսակցական վոգով և նրա միջոցով մասսաներին պետք է հաղորդվի կուսակցական ազդեցությունն ու ղեկավարությունը: Մեր զորամասերում յերբեմն այդ այնքան էլ ուժեղ չե: Մինչև իսկ կուսակցական բաժինները վատ են դրված: Իսկ կուսակցական ազդեցությունն հաճախ անց են կացնում մակերեսային և միակողմանի ձևով:

Յուրաքանչյուր պատի թերթի առաջադրվում են հետևյալ պահանջները.—1) նրան պետք է մասնակցեն ըստ հնարավորին մեծ քանակությամբ վինթղթակիցներ. 2) նա պետք է լինի տեղական. 3) պետք է անցկացնի կուսակցական ստույգ գիծ. 4) պետք է յուրաքանչյուր համարում դնի վորոշակի նպատակներ. 5) պետք է ծայրից ծայր ռազմականացված լինի. 6) թերթը պետք է հրատապ լինի:

Պատի թերթերի կանոնադրությունն առաջադրում է պատի թերթի համար 4 հիմնական բաժին.—1) ռազմական ու ռազմաքաղաքական ուսուցում և կարմիր բանակային ուսուցում. 2) կուսակցության ու կոմյերիտական կյանք. 3) կենցաղ. 4) բանակ—գյուղ—քաղաք։

Վերոհիշյալ չորս բաժինների համար վերնագրեր կարող են լինել. ռազմական ուսուցման համար՝ «Ցեռ չենք մնում». կուսբաժնի համար՝ «Մեր բջիջը մարտիկների մասին» կենցաղի համար՝ «Գրոհենք անմաքրության դեմ». քաղաքի ու գյուղի զոդման համար՝ «Ինչ են մեզ գրում գյուղից»։

Շնորհիվ այդպիսի սիստեմի, պատի թերթի յուրաքանչյուր համար սուր ձևով կտա մի քանի առանցքային հարցեր. այդ հարցերը փոխվում են, վորի շնորհիվ յուրաքանչյուր համար խիստ տարբերվում է նախընթաց համարից և հետապնդում է մի վորոշ նպատակ։

Զինթղթակիցները հաճախ իրավացի կերպով դանդատվում են, վոր խմբկոլները թղթակցությունների մի մասը կորցնում են կամ գիտակցաբար չեն զետեղում։ Զինթղթակիցներից շատերին վոչ մի պատասխան չի տրվում թղթակցությունների վիճակի մասին։

Ինչպիսի թղթակցություններ մեզանում ամենից հաճախ չեն զետեղում մի քանի պատի թերթեր. իհարկե, մերկացնող, բնույթի թղթակցությունները։

Խմբկոլը մի կողմն է դնում նման թղթակցությունները, վախենալով ընդհարումներ ստեղծել առանձին ընկերների հետ։

Իսկ վորտեղ է յելքն այդ դժվարին դրությունից։ Ամենից առաջ գինթղթակցի դաստիարակության մեջ։ Ուշադրավ է այն հանգամանքը, վոր սկսնակ գինթղթակիցը գրել է սկսում ամենից առաջ մերկացնող թղթակցություններ։

Յուրաքանչյուր պատի թերթում պետք է լինի «թերթն ողնեց» բաժինը։ Այդ բաժնում պետք է ցույց տալ, թե ինչ է արված գետեղված թղթակցության առթիվ։

Խմբկոլների կյանքում մեծ թերություն այն է, վոր նրանք չեն վարժվել դեռ ևս աշխատել կոլեկտիվ ձևով։ Ինչպես հարկն է, ընտրվում է խմբկոլ լրիվ կազմով, բայց աշխատում է նրա չնչին մասը։ Սակավ չեն այն դեպքերը, յերբ 2 հոգի կատարում է ամբողջ աշխատանքը, իսկ մյուսները մատը մատին չեն խփում թերթի համար։ Յեվ այդ կոչվում է կոլեկտիվ աշխատանք։ Խմբկոլ ընտրելիս պետք է ջոկել այնպիսի մարդկանց, վորոնք ծանրաբեռնված չեն այլ աշխատանքներով և վոչ էլ շատ պատասխանատու պաշտոններ ունեն։

Մեծ ուշադրություն պետք է դարձնել թերթ հրատարակելիս նրա գրագիտության վրա։ Մեր թերթերը լի յեն քերականական սխալներով։ Թղթակցություններն արտագրող ընկերներին մեղադրել չի կարելի, վորովհետև նրանք էլ հաճախ կիսագրագետ են լինում։ Բայց և չի կարելի ուրիշ ընդայել անգրագետ թերթ։

Հրատարակելուց առաջ թերթը հարկավոր է արբագրել, ուղղել նրա սխալները։ Դրա համար հարկավոր է խնդրել ավելի գրագետ ընկերոջ ու-

շարունակաբար աչքի անցկացնել արդեն պատրաստ թերթը և ուղղել նրա մեջ յեղած սխալները։ Այդ դժվար չե անել։ Սրբագրությունը շատ քիչ ժամանակ կխլի, բայց թերթը լույս կտեսնի գրագետ ու վայելուչ ձևով։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զինթղթակիցների մասին 3
2. Զինթղթակցային շարժումը Կարմիր բանակում . . 7
3. Զինթղթակցի խնդիրները 7
4. Զինթղթակցի գործնական աշխատանքները 7
5. Զինթղթակցային կազմակերպությունը կամավոր կազմակերպություն է 8
6. Ինչպես զինթղթակից դառնալ 9
7. Նոր կզինթղթակիցն ու զիվիզիայի թերթը 10
8. Զինթղթակիցն ու ինքնաքննադատությունը . . . 11
9. Գրել կարելի յե ամեն ինչի մասին 12
10. Ինչ և պահանջում նյութը նախ քան նրա լուսաբանումը 13
11. Չի կարելի անվերջ ընդհանրացել 16
12. Ավելի մոտ կյանքին 17
13. Պատրաստությունը պատերազմի ժամանակվա աշխատանքներին 18
14. Զինթղթակցի աշխատանքը ճամբարում 19
15. Զինթղթակիցը մանյովրներում 22
16. Ռազմական թղթակցության տեխնիկան 25
17. Ինչպես ընտրել և դեմ ուղարկել նյութը 26
18. Զինթղթակիցն ու զինվորական կարգապահությունը 27
19. Պատի թերթը վաշտում 29

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0038760

ԳԻՆԸ 10 ԿՊԳ.

I
3798